պատճառ պէտք էր, որ թողային հայ կրօնը և եկեղեցին. և ահա պատճառն եւս վրայ է հասել, ինչպէս կարդացողը կը տեսնէ Գ. Հ, Ղուկասեանի գրքի մէջ։

Այս եւս աւելացնեմ ի գիտութիւն ընթերցողաց, որ երբ յամին 1887 յունիսին առաջնորդական պաշտօնով գնացի Զամախի և լսեցի, որ սուտ եղբայրները — հայ բողոքականները բաւական համարձակութեամբ աշխատում են արհեստաւորի պատրուակաւ — խառատ, դարբին եւայլն, որսալ խեղճ հայ գիւղացիներին, իսկոյն նախ՝ ես անձամբ անձին փութացայ այն մեծ գիւղերը — Մաղրասայ, Մէյսարի, Զարդարան են, և եկեղեցւոյ մէջ, և մեր ուսումնարանումն խօսեցի ինչ և ինչքան հարկաւորն էր, և ապա՝ կարգադրեցի, որ ամենայն կիւրակէ քաղաքի մեր դպրոցաց ուսուցիչներն և ուսեալ քահանայք շրջեն գիւղերն և քարոզեն ժողովրդեանն։ Եւ այսպէս, բողոքականները տեսնելով մեր և մերայնոց աշխատութիւնը, յետ կանգնեցին, և վերջերս խստաւ դադարեցան գործելուց, ինչպէս գիտեն Զամախեցիք։

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ

ԳԼՈՒԽ Գ. *երես* 25. «1836 թուականին Շուշիում դեռ եւս գործում էին Բազելեան քարոզիչք Կարլ Պֆոնտէր, Ֆրիդրիխ Շալբիմբերգ, Աւգուստ Կրէյս, Ֆիլիպիան Զարեմբա և տպագրիչ Ֆրեդրիխ Իւդա։ Այս էլ պէտք է գիտենալ, որ դեռ 1828 թուականից սկսած, այսինքն այն ժամանակից, երբ քարոզիչներն արդէն հաստատուել, տուն — տեղ էին դարձել Շուշիում, նոցանից մէկը կամ միւսը ստէպ ստէպ դուրս էր գալիս շրջելու Անդրկովկասու միւս նահանգները, մանաւանդ *Շամախի*, նոր եկամուտներ անելու Աստուծոյ խօսքի համար . . . »։

ԳԼՈՒԽ Ե. 35. Միսիոնարները Շամախում, Զաքարիա եպիսկոպոսը Շամախում, Սարգիս Համբարձումեանցը իբրեւ սպասաւոր քարոզիչներին, քարոզչաց հոգատարածութիւնքը Սարգսի համար և Իսլանտիա ուղարկելը, նորա վերադարձը։